

**«Կենցաղային սառեցնող սարքերի էներգապիտակավորման մասին»
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի
ԹԻՎ 1060/2010 ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի կողմից սպառվող էներգիայի եւ
այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի մասին
ստանդարտ տեղեկությունների ներկայացման միջոցով նշում կատարելու մասին»
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ
հրահանգը ¹ եւ մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի
պատվիրակված ակտեր՝ կապված էներգասպառող այնպիսի արտադրանքի
պիտակավորման հետ, որն ունի էներգիայի խնայողության զգալի ներուժ եւ
համարժեք ֆունկցիոնալության պարագայում՝ արդյունավետության
մակարդակներում էական տարբերություններ.
- 2) կենցաղային սառեցնող սարքերի էներգապիտակավորման վերաբերյալ
դրույթները սահմանվել են Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝
«Կենցաղային էլեկտրական սառնարանների, սառցարանների եւ դրանց
համակցումը հանդիսացող սարքերի էներգապիտակավորման մասին»
Հանձնաժողովի 1994 թվականի հունվարի 21-ի 94/2/ԵՀ հրահանգով ².

¹ ՊՏ L 153, 18.06.2010թ., էջ 1:

² ՊՏ L 45, 17.02.1994թ., էջ 1:

- 3) կենցաղային սառեցնող սարքերի կողմից սպառվող էլեկտրաէներգիան կազմում է Միությունում կենցաղային նպատակներով էլեկտրաէներգիայի ընդհանուր պահանջարկի զգալի մասը: Բացի էներգաարդյունավետության առումով արդեն իսկ կատարված բարելավումներից, կենցաղային սառեցնող սարքերի կողմից էներգիայի սպառումը հետագայում նվազեցնելու շրջանակն էական նշանակություն ունի.
- 4) 94/2/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի, եւ սույն կանոնակարգով նոր դրույթներ սահմանվեն՝ ապահովելու էներգապիտակավորման միջոցով մատակարարների համար դինամիկ խրախուսական միջոցների ստեղծումը՝ կենցաղային սառեցնող սարքերի էներգաարդյունավետությունն էլ ավելի բարելավելու եւ դեպի էներգաարդյունավետ տեխնոլոգիաների շուկայի անցումն արագացնելու համար.
- 5) սույն կանոնակարգով եւ «Կենցաղային սառեցնող սարքերին ներկայացվող էկոնախագծման պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 22-ի թիվ 643/2009 կանոնակարգով (ԵՀ)³ սահմանված դրույթների համակցված ազդեցությունը կարող է հանգեցնել մինչեւ 2020 թվականը 6 ՏՎտ/ժ էլեկտրաէներգիայի տարեկան խնայողությանը⁴ ի տարբերություն մի իրավիճակի, երբ որեւէ միջոց չի ձեռնարկվում.
- 6) էներգախնայողության հնարավորություն կա նաեւ կլանող (աբսորբող) տիպի սառեցնող սարքերի եւ գինիների պահպանման սարքերի ընդլայնվող շուկաների արտադրատեսակների դեպքում: Հետեւաբար, դրանք պետք է ընդգրկվեն սույն կանոնակարգի գործողության ոլորտում.

³ՊՏ L 191, 23.07.2009թ., էջ 53:

⁴ ՍԵՆԵԼԵԿ-ի EN 153՝ 2006 թվականի փետրվար / EN ISO 15502՝ 2005 թվականի հոկտեմբեր, ստանդարտների համաձայն չափվելու դեպքում:

- 7) կլանող տիպի սառեցնող սարքերն անաղմուկ են, սակայն սպառում են զգալիորեն ավելի շատ էլեկտրաէներգիա, քան կոմպրեսորային տիպի սարքերը: Որպեսզի վերջնական սպառողները կայացնեն տեղեկացված որոշում, պիտակի վրա պետք է գետեղվեն տեղեկություններ կենցաղային սառեցնող սարքերի՝ օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակների վերաբերյալ.
- 8) պիտակի վրա ներկայացված տեղեկությունները պետք է ձեռք բերվեն հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերի կիրառմամբ, որոնցում հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները՝ ներառյալ, առկայության դեպքում, ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտները՝ ինչպես դրանք թվարկված են Տեխնիկական ստանդարտների եւ կանոնակարգերի, ինչպես նաեւ Տեղեկատվական հասարակության ծառայությունների մասին կանոնների ոլորտներում տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի I հավելվածում ⁵.
- 9) սույն կանոնակարգով պետք է սահմանվեն կենցաղային սառեցնող սարքերի պիտակների միասնական ձեւն ու բովանդակությունը.
- 10) բացի դրանից, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն կենցաղային սառեցնող սարքերի տեխնիկական փաստաթղթերին եւ տեղեկաթերթիկներին ներկայացվող պահանջները.
- 11) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն կենցաղային սառեցնող սարքերի հեռահար վաճառքի, գովազդի, ինչպես նաեւ տեխնիկական գովազդային նյութերի ցանկացած տեսակի համար տրամադրվող տեղեկություններին ներկայացվող պահանջները.

⁵ ՊՏ L 204, 21.07.1998 թ., էջ 37:

- 12) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայումը՝ տեխնոլոգիական առաջընթացը հաշվի առնելով.
- 13) 94/2/ԵՀ հրահանգից դեպի սույն կանոնակարգ անցումը դյուրացնելու նպատակով միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի սույն կանոնակարգին համապատասխան պիտակավորված կենցաղային սառեցնող սարքերը համարվեն 94/2/ԵՀ կանոնակարգին համապատասխանող.
- 14) հետեւաբար, 94/2/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են 10-ից 1500 լիտր պահպանման ծավալներ ունեցող էլեկտրական ցանցից սնուցվող կենցաղային սառեցնող սարքերի պիտակավորմանը եւ արտադրանքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:
2. Սույն կանոնակարգը կիրառվում է էլեկտրական ցանցից սնուցվող կենցաղային սառեցնող սարքերի՝ ներառյալ ոչ կենցաղային նպատակներով օգտագործման համար վաճառվող կամ սննդամթերքից բացի այլ արտադրատեսակներ սառեցնող սարքերի, այդ թվում՝ ներկառուցված սարքերի նկատմամբ:

Այն նաեւ կիրառվում է էլեկտրական ցանցից սնուցվող այն կենցաղային սառեցնող սարքերի նկատմամբ, որոնք կարող են աշխատել մարտկոցով:
3. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝
 - ա) սառեցնող սարքեր, որոնք առավելապես սնուցվում են էլեկտրաէներգիայից տարբեր՝ էներգիայի այլ աղբյուրներից, ինչպիսին է օրինակ՝ հեղուկացված նավթային գազը (ՀՆԳ), կերոսինը եւ կենսադիզելային վառելիքը.

- բ) մարտկոցներով աշխատող սառեցնող սարքեր, որոնք կարող են ցանցին միացվել հաստատուն հոսանքի/փոփոխական հոսանքի առանձին ձեռքբերվող փոխարկիչներով.
- գ) հատուկ պատվերով պատրաստված սառեցնող սարքեր, որոնք պատրաստվել են որպես եզակի նմուշներ եւ համարժեք չեն սառեցնող սարքերի այլ մոդելներին.
- դ) սպասարկման ոլորտի սառեցնող սարքեր, որոնց դեպքում սառեցված սննդամթերքի դուրսբերումը սարքից արձանագրվում է էլեկտրոնային եղանակով, իսկ այդ տեղեկությունը կարող է ցանցային միացման միջոցով ավտոմատ կերպով փոխանցվել հեռակառավարման համակարգ՝ հաշվառման համար.
- ե) սարքեր, որոնց հիմնական գործառույթը սառեցման միջոցով սննդամթերքի պահպանումը չէ, ինչպես օրինակ՝ սառույց պատրաստելու համար նախատեսված առանձին սարքերը կամ պաղեցված ըմպելիքների դիսպենսերները:

Հոդված 2

Սահմանումները

Ի հավելումն 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների, կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

- 1) «սննդամթերք» նշանակում է սնունդ, բաղադրատարրեր, խմիչքներ, այդ թվում՝ գինի եւ ի սկզբանե սպառման համար նախատեսված այլ մթերք, որն անհրաժեշտ է սառեցնել սահմանված ջերմաստիճանում.
- 2) «կենցաղային սառեցնող սարք» նշանակում է մեկուսացված պահարան, որն ունի մեկ կամ մի քանի խցիկներ, որոնք նախատեսված են սննդամթերքը սառնարանում պահելու կամ այն սառեցնելու համար, կամ

- ոչ մասնագիտական նպատակներով սառնարանում պահված կամ սառեցված սննդամթերքը պահելու համար, որոնք սառեցվում են էներգասպառող մեկ կամ մի քանի գործընթացներով, այդ թվում՝ սարքեր, որոնք վաճառվում են որպես կոմպլեկտավորված տարրերի հավաքածու եւ նախատեսված են վերջնական սպառողի կողմից հավաքման համար.
- 3) «ներկառուցված սարք» նշանակում է ֆիքսված սառեցնող սարք, որը նախատեսված է պահարանում, պատի մեջ կամ նմանատիպ վայրում բացված այնպիսի խորշում տեղադրման համար, որը պետք է վերջնամշակվի կահույքի միջոցով.
- 4) «սառնարան» նշանակում է սննդամթերքի պահպանման համար նախատեսված սառեցնող սարք՝ առնվազն մեկ խցիկով, որը նախատեսված է թարմ սննդամթերք եւ (կամ) խմիչք, այդ թվում՝ գինի պահելու համար.
- 5) «կոմպրեսորային տիպի սառեցնող սարք» նշանակում է սառեցնող սարք, որում սառեցումը կատարվում է շարժիչով աշխատող կոմպրեսորի միջոցով.
- 6) «կլանող տիպի սառեցնող սարք» նշանակում է սառեցնող սարք, որում սառեցումը կատարվում է կլանման պրոցեսի միջոցով՝ ջերմությունը որպես էներգիայի աղբյուր օգտագործելով.
- 7) «սառնարան-սառցարան» նշանակում է սառեցնող սարք, որն ունի թարմ մթերք պահելու համար նախատեսված առնվազն մեկ խցիկ եւ առնվազն եւս մեկ խցիկ թարմ մթերք սառեցնելու եւ եռաստղանի պահպանման պայմաններում (սննդամթերքի սառեցման խցիկ) սառեցված սննդամթերքը պահելու համար.
- 8) «սառեցված սննդամթերքը պահելու պահարան» նշանակում է սառեցնող սարք՝ սառեցված սննդամթերք պահելու համար նախատեսված մեկ կամ մի քանի խցիկներով.
- 9) «սննդամթերքի համար նախատեսված սառցարան» նշանակում է սառեցնող սարք՝ մեկ կամ մի քանի խցիկներով, որոնք նախատեսված են սննդամթերքը մթնոլորտային օդի ջերմաստիճանից մինչեւ $-18\text{ }^{\circ}\text{C}$ սառեցնելու համար, եւ որը նաեւ նախատեսված է սառեցված սննդամթերքը

եռաստղանի պահպանման պայմաններում պահելու համար. սննդամթերքի համար նախատեսված սառցարանը կարող է նաեւ ունենալ երկաստղանի պահպանման բաժիններ եւ (կամ) խցիկներ՝ խցիկի կամ պահարանի ներսում.

- 10) «գինիների պահպանման սարք» նշանակում է սառեցնող սարք, որը, գինիների պահպանման մեկ կամ մի քանի խցիկներից բացի, ոչ մի այլ խցիկ չունի.
- 11) «համապիտանի սարք» նշանակում է սառեցնող սարք, որը համապիտանի մեկ կամ մի քանի խցիկներից բացի ոչ մի այլ խցիկ չունի.
- 12) «կենցաղային սառեցնող սարքի համարժեք» նշանակում է միեւնույն արտադրողի կողմից այլ առետրային կողով շուկայահանված կենցաղային սառեցնող սարքի մեկ այլ մոդել, որը շուկայահանվել է նույն ընդհանուր եւ պահպանման ծավալներով, նույն տեխնիկական, արդյունավետության եւ շահագործման բնութագրերով եւ խցիկի նույն տիպերով.
- 13) «վերջնական սպառող» նշանակում է սպառող, որը գնում է կամ ակնկալվում է, որ կգնի կենցաղային սառեցնող սարքը.
- 14) «վաճառքի կետ» նշանակում է վայր, որտեղ կենցաղային սառեցնող սարքերը ցուցադրվում կամ առաջարկվում են վաճառքի, վարձակալության կամ ապառիկ գնման համար:

Կիրառելի են նաեւ I հավելվածով սահմանված սահմանումները:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները

Մատակարարներն ապահովում են, որ՝

- ա) յուրաքանչյուր կենցաղային սառեցնող սարք համալրված լինի II հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկությունների պարունակությամբ տպագրված պիտակով.

- բ) տրամադրվի III հավելվածով սահմանված արտադրանքի տեղեկաթերթիկը.
- գ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ներկայացված պահանջի դեպքում տրամադրվեն IV հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) կենցաղային սառեցնող սարքի կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդում հրապարակվում են էներգասպառման կամ գնի վերաբերյալ տեղեկություններ.
- ե) կենցաղային սառեցնող սարքի կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որով նկարագրվում են դրա որոշ տեխնիկական պարամետրեր, ընդգրկի այդ մոդելի էներգաարդյունավետության դասի մասին տեղեկություններ:

Հոդված 4

Դիլերների պարտականությունները

Դիլերներն ապահովում են, որ՝

- ա) յուրաքանչյուր կենցաղային սառեցնող սարք վաճառքի կետում՝ 3(ա) հոդվածին համապատասխան, դիմային մասի վրա կամ սարքի վերին մասում դրսի կողմից կրի մատակարարների կողմից տրամադրված պիտակն այնպես, որ այն լինի հստակ տեսանելի.
- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ գնման համար առաջարկվող կենցաղային սառեցնող սարքերը, այն դեպքում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված արտադրանքը, շուկայահանվեն՝ V հավելվածին համապատասխան՝ մատակարարների կողմից տրամադրվող տեղեկությունների զետեղմամբ.

- դ) կենցաղային սառեցնող սարքի կոնկրետ մոդելի ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը պարունակում է էներգասպառման կամ գնի վերաբերյալ տեղեկություններ.
- ե) կենցաղային սառեցնող սարքի կոնկրետ մոդելին վերաբերող եւ դրա որոշ տեխնիկական պարամետրեր նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ընդգրկի այդ մոդելի էներգաարդյունավետության դասի վերաբերյալ հղում:

Հոդված 5

Չափման մեթոդները

3-րդ հոդվածի համաձայն տրամադրվելիք տեղեկությունները ձեռք են բերվում հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման այնպիսի ընթացակարգերով, որոնցում հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները, ինչպես սահմանված է VI հավելվածով:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Էներգաարդյունավետության հայտարարված դասին, տարեկան էներգասպառմանը, թարմ եւ սառեցված սննդամթերքի ծավալներին, սառեցման հզորությանը եւ օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակներին համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են VII հավելվածով սահմանված ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը սույն կանոնակարգը վերանայում է տեխնոլոգիական առաջընթացի տեսանկյունից՝ այն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան չորս տարի անց: Վերանայման արդյունքում գնահատվում են, մասնավորապես, VII հավելվածով սահմանված՝ ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները եւ VIII հավելվածով սահմանված ուղղիչ գործակիցների արժեքները վերացնելու կամ նվազեցնելու հնարավորությունները:

Հոդված 8

Ուժը կորցրած ճանաչելը

94/2/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2011 թվականի նոյեմբերի 30-ից:

Հոդված 9

Անցումային դրույթներ

1. 3(դ), 3(ե) հոդվածները, 4(բ), 4(գ) եւ 4(դ) հոդվածները չեն կիրառվում մինչեւ 2012 թվականի մարտի 30-ը հրապարակված տպագիր գովազդների եւ տպագիր տեխնիկական գովազդային նյութերի նկատմամբ:
2. Մինչեւ 2011 թվականի նոյեմբերի 30-ը շուկայահանված կենցաղային սառեցնող սարքերը պետք է համապատասխանեն 94/2/ԵՀ հրահանգով սահմանված դրույթներին:
3. Այն կենցաղային սառեցնող սարքերը, որոնք համապատասխանում են սույն կանոնակարգի դրույթներին, եւ որոնք շուկայահանվել, առաջարկվել են վաճառքի, վարձակալության կամ ապառիկ գնման համար մինչեւ 2011 թվականի նոյեմբերի 30-ը, համարվում են 94/2/ԵՀ հրահանգի պահանջներին համապատասխանող:

*Հոդված 10***Ուժի մեջ մտնելը եւ կիրառությունը**

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:
2. Այն կիրառվում է 2011 թվականի նոյեմբերի 30-ից: Այնուամենայնիվ, 3(դ), 3(դ) հոդվածները, 4(բ), 4(գ) եւ 4(դ) հոդվածները կիրառվում են 2012 թվականի մարտի 30-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2010 թվականի սեպտեմբերի 28-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***II-IX հավելվածների նպատակներով կիրառվող սահմանումները**

II-ից IX հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

- ա) «չսառեցնող համակարգ» նշանակում է եղյամի մշտական գոյացումը կանխելու համար ավտոմատ կերպով աշխատող համակարգ, որի դեպքում հովացումն ապահովվում է օդի հարկադիր շրջանառությամբ, գոլորշիչը կամ գոլորշիչները հալեցվում են հալեցման ավտոմատ համակարգի միջոցով, եւ հալեցման արդյունքում առաջացող ջուրը հեռացվում է ավտոմատ եղանակով.
- բ) «չսառեցնող խցիկ» նշանակում է չսառեցնող համակարգով հալեցվող ցանկացած խցիկ.
- գ) «սառնարան-նկուղ սարք» նշանակում է սառեցնող սարք, որում կա թարմ սննդամթերքի պահպանման առնվազն մեկ խցիկ եւ մեկ նկուղային խցիկ, սակայն չկա սառեցված սննդամթերքի պահպանման, պաղեցման կամ սառույց պատրաստելու համար նախատեսված խցիկներ.
- դ) «նկուղ սարք» նշանակում է սառեցնող սարք, որում կա միայն մեկ կամ մի քանի նկուղային խցիկներ.
- ե) «սառնարան-պաղեցնող սարք» նշանակում է սառնարանային սարքվածք, որտեղ կա թարմ սննդամթերքի պահպանման առնվազն մեկ խցիկ եւ մեկ պաղեցնող խցիկ, սակայն չկան սառեցված սննդամթերքի պահպանման խցիկներ.
- զ) «խցիկ» նշանակում է (է)-ից (ժդ) կետերում թվարկված ցանկացած խցիկ.
- է) «թարմ սննդամթերքի պահպանման խցիկ» նշանակում է չսառեցված սննդամթերքի համար նախատեսված խցիկ, որն էլ իր հերթին կարող է բաժանվել ենթախցիկների.

- ը) «նկուղային խցիկ» նշանակում է կոնկրետ սննդամթերքի կամ խմիչքների պահպանման համար նախատեսված խցիկ՝ թարմ սննդամթերքի պահպանման խցիկում առկա ջերմաստիճանից ավելի բարձր ջերմաստիճանով.
- թ) «պաղեցնող խցիկ» նշանակում է շուտ փչացող սննդամթերքի պահպանման համար հատուկ նախատեսված խցիկ.
- ժ) «սառույցի պատրաստման խցիկ» նշանակում է սառեցման եւ սառույցի պահպանման համար հատուկ նախատեսված ցածր ջերմաստիճանով խցիկ.
- ժա) «սառեցված սննդամթերքի պահպանման խցիկ» նշանակում է սառեցված սննդամթերքի պահպանման համար հատուկ նախատեսված ցածր ջերմաստիճանի խցիկ, որն ըստ ջերմաստիճանի դասակարգվում է հետեւյալ կերպ՝
- i) մեկաստղանի պահպանման խցիկ՝ սառեցված սննդամթերքի պահպանման խցիկ, որում ջերմաստիճանը -6°C -ից բարձր չէ.
 - ii) երկաստղանի պահպանման խցիկ՝ սառեցված սննդամթերքի պահպանման խցիկ, որում ջերմաստիճանը -12°C -ից բարձր չէ.
 - iii) եռաստղանի պահպանման խցիկ՝ սառեցված սննդամթերքի պահպանման խցիկ, որում ջերմաստիճանը -18°C -ից բարձր չէ.
 - iv) սննդամթերքի սառեցման խցիկ (կամ քառաստղանի պահպանման խցիկ)՝ 100 լիտր պահպանման ծավալի պարագայում առնվազն 4,5 կիլոգրամ (եւ 2 կիլոգրամից ոչ պակաս) սննդամթերքը 24 ժամվա ընթացքում օդի ջերմաստիճանից մինչեւ -18°C ջերմաստիճանը սառեցնելու համար նախատեսված խցիկ, որը նաեւ հարմար է սառեցված սննդամթերքը եռաստղանի պահպանման պայմաններում պահելու համար եւ կարող է խցիկի ներսում ունենալ երկաստղանի պահպանման բաժիններ.

- v) 0-աստղանի պահպանման խցիկ՝ սառեցված սննդամթերքի պահպանման խցիկ, որում ջերմաստիճանը $< 0\text{ }^{\circ}\text{C}$ է, եւ որը կարող է նաեւ օգտագործվել սառույցի սառեցման եւ պահպանման համար, սակայն նախատեսված չէ շուտ փչացող սննդամթերքի պահպանման համար.
- ժբ) «գինու պահպանման խցիկ» նշանակում է կա՛մ բացառապես գինիների կարճաժամկետ պահպանման նպատակով նախատեսված խցիկ՝ գինիները խմելու համար կատարյալ ջերմաստիճանի հասցնելու համար, կա՛մ գինիների երկարաժամկետ պահպանման նպատակով՝ գինիների հասունացումը թույլ տալու համար՝ հետեւյալ հատկություններով՝
- i) պահպանման շարունակական ջերմաստիճան՝ կամ նախապես կարգաբերված կամ մեխանիկական ճանապարհով կարգաբերվող, արտադրողի հրահանգների համաձայն՝ $+ 5\text{ }^{\circ}\text{C}$ -ից $+ 20\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանով.
- ii) կենցաղային սառեցնող սարքերի համար նախատեսված կլիմայական դասով սահմանված յուրաքանչյուր հայտարարված օդի ջերմաստիճանով $0,5\text{ }^{\circ}\text{C}$ -ից պակաս՝ ժամանակի ընթացքում տատանմամբ պահպանման ջերմաստիճան (ջերմաստիճաններ).
- iii) $50\text{ }\%$ -ից մինչեւ $80\text{ }\%$ միջակայքում խցիկի խոնավության ակտիվ կամ պասիվ հսկողություն.
- iv) կառուցված՝ դեպի խցիկ տատանման փոխանցումը նվազեցնելու համար՝ լինի դա սառնարանի կոմպրեսորից, թե ցանկացած այլ արտաքին աղբյուրից.
- ժգ) «համապիտանի խցիկ» նշանակում է խցիկների երկու կամ ավելի տեսակների ջերմաստիճաններով օգտագործվելու համար նախատեսված խցիկ, որը վերջնական սպառողի կողմից կարող է

կարգաբերվել յուրաքանչյուր տեսակի խցիկի համար կիրառելի աշխատանքային ջերմաստիճանի միջակայքն արտադրողի հրահանգների համաձայն շարունակաբար պահպանելու համար, սակայն, եթե այդ հատկության շնորհիվ կարելի է խցիկում ջերմաստիճանները միայն սահմանափակ ժամանակահատվածով փոխել մեկ այլ ջերմաստիճանային միջակայքի (ինչպես օրինակ՝ արագ սառեցման հնարավորություն), ապա խցիկը սույն կանոնակարգով սահմանված իմաստով համապիտանի խցիկ չէ:


- ժդ) «այլ խցիկ» նշանակում է գինու պահպանման համար նախատեսված խցիկից տարբեր՝ այլ խցիկ, որը նախատեսված է $+14\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանից բարձր ջերմաստիճանի պայմաններում սննդամթերքի կոնկրետ տեսակի պահանման համար.
- ժե) «երկաստղանի պահպանման բաժին» նշանակում է սննդամթերքի սառցարան, սննդամթերքի սառեցման խցիկ, եռաստղանի պահպանման խցիկ կամ սառեցված սննդամթերքի եռաստղանի պահպանման պահարան, որը չունի իր առանձին դուռը կամ կափարիչը, եւ որում ջերմաստիճանը $-12\text{ }^{\circ}\text{C}$ բարձր չէ.
- ժզ) «սառցարան-կրպակ» նշանակում է սննդամթերքի սառցարան, որում խցիկը (խցիկները) հասանելի է (են) սարքի վերին հատվածից, կամ որն ունի թե՛ վերեւից բացվող եւ թե՛ ուղղահայաց բացվող տեսակի խցիկներ, սակայն որի վերեւից բացվող տեսակի խցիկի (խցիկների) համախառն ծավալը գերազանցում է սարքի ընդհանուր համախառն ծավալի 75 %-ը.
- ժէ) «վերեւից բացվող տեսակի կամ կրպակաձեւ տեսակի» նշանակում է սարքի վերեւից հասանելի խցիկով (խցիկներով) սառեցնող սարք.
- ժը) «ուղղահայաց բացվող տեսակի» նշանակում է սարքի առջեւի հատվածից հասանելի խցիկով (խցիկներով) սառեցնող սարք.

- ժթ) «արագ սառեցում» նշանակում է ռեւերսիվ հատկություն, որը արտադրողի հրահանգների համաձայն ակտիվացվում է վերջնական սպառողի կողմից եւ նվազեցնում է սառցարանի կամ սառցարանի խցիկի պահպանման ջերմաստիճանը՝ չսառեցված սննդամթերքն առավել արագ սառեցնելու նպատակով.
- ի) «մոդելի նույնականացուցիչ» նշանակում է ծածկագիր՝ սովորաբար տառաթվային, որով սառեցնող սարքի կոնկրետ մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից:
-

ՀԱՎԵԼՎԱԾ II

Պիտակ

- ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՌԵՑՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՊԻՏԱԿԸ՝ ԴԱՍԱԿԱՐԳՎԱԾ ԸՍՏ ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ A+++-ԻՑ C ԴԱՍԵՐԻ



I
II

III

IV

V
VI
VII

- 1) Պիտակը պետք է ընդգրկի հետևյալ տեղեկությունները՝
- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - II. մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը.
 - III. էներգաարդյունավետության դասը՝ ինչպես սահմանված է IX հավելվածում. կենցաղային սառեցնող սարքերի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
 - IV. Տարեկան էներգասպառումը (A_{E_c}) կՎտժ/տարի-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VIII հավելվածի 3(2) կետի համաձայն.
 - V. բոլոր այն խցիկների պահպանման ծավալների գումարը, որոնք չունեն աստղային դասակարգում (այն է՝ աշխատանքային ջերմաստիճանը > -6 °C)՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
 - VI. սառեցված սննդամթերքի պահպանման բոլոր այն խցիկների պահպանման ծավալների գումարը, որոնք ունեն աստղային դասակարգում (այն է՝ աշխատանքային ջերմաստիճանը < -6 °C)՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը, եւ այն խցիկի աստղային դասակարգումը, որն այդ գումարի մեջ ունի ամենամեծ մասնաբաժինը. եթե կենցաղային սառեցնող սարքերը չունեն սառեցված սննդամթերքի պահպանման խցիկ(խցիկներ), մատակարարը այդ արժեքի փոխարեն կատարում է «- L» նշումը եւ աստղային դասակարգման համար նախատեսված տարածքը թողնում է դատարկ.


VII. օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված դԲԱ-ով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը:

Այնուամենայնիվ, գինու պահպանման համար նախատեսված սարքերի դեպքում V եւ VI կետերում նշվածները փոխարինվում են 75 սանտիլիտր տարողունակությամբ ստանդարտ շշերի այն թվով արտահայտված նոմինալ տարողունակությամբ, որով հնարավոր է սարքում դրանք տեղավորվել՝ արտադրողի հրահանգների համաձայն:

- 2) Պիտակի ձեւը պետք է համապատասխանի սույն հավելվածի 3(1) կետով սահմանվածին: Որպես բացառություն՝ եթե մոդելին Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի¹ թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՀ) համաձայն շնորհվել է «ԵՄ Էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ Էկոպիտակի պատճենը:

¹ ՊՏ L 27, 30.01.2010թ., էջ 1:


2. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՌԵՑՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՊԻՏԱԿԸ՝ ԴԱՍԱԿԱՐԳՎԱԾ ԸՍՏ ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ D-ԻՑ G ԴԱՍԵՐԻ



- 1) 1(1) կետում նշված տեղեկությունները պետք է զետեղվեն այս պիտակի վրա:
- 2) Պիտակի ձեւը պետք է համապատասխանի սույն հավելվածի 3(2) կետով սահմանվածին: Որպես բացառություն՝ եթե մոդելին թիվ 66/2010 (ԵՀ) կանոնակարգի համաձայն շնորհվել է «ԵՄ Էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ Էկոպիտակի պատճենը:

3. ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ

- 1) Էներգաարդյունավետության A+++ -ից C դասերի համաձայն դասակարգված կենցաղային սառեցնող սարքերի (բացառությամբ գինու պահպանման համար նախատեսված սարքերի) պիտակի ձեւը պետք է համապատասխանի հետեւյալին՝



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 110 մմ լայնություն եւ 220 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրված է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է համապատասխանի վերը նշված մասնագրերին.

բ) պիտակի ֆոնը պետք է լինի սպիտակ.

գ) գույները՝ ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ ինչպես հետեւյալ օրինակում՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.

դ) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին):

1. **ԵՄ պիտակի սահմանագծերը՝** 5 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

2. **ԵՄ լոգոն (պատկերանիշը)՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. **Էներգապիտակ՝** գույն՝ X-00-00-00:

Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է.
ԵՄ լոգո + Էներգապիտակ՝ լայնություն՝ 92 մմ,
բարձրություն՝ 17 մմ:

4. **Լոգոյի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, երկարություն՝ 92,5 մմ:

5. **A-ից G սանդղակը՝**

— **Սլաք՝** բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 0,75 մմ, գույներ՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը՝ 00-X-X-00:

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 19 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 13 կետ, մեծատառ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դասը՝

- **Սլաք՝** լայնություն՝ 26 մմ, բարձրություն՝ 14 մմ, 100 % սեւ.
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 29 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, մեծատառ, սպիտակ եւ գտնվում են մեկ շարքի վրա.

7. Էներգիա՝

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, մեծատառ, սեւ:

8. Տարեկան էներգասպառումը՝

- **Եզրագիծ՝** 3 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 45 կետ, 100 % սեւ:
- **Երկրորդ տողը՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 17 կետ, 100 % սեւ:

9. Բոլոր այն խցերի պահպանման ծավալները, որոնք չունեն

աստղային դասակարգում՝

- **Եզրագիծ՝** 3 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 25 կետ, 100 % սեւ:
«Կալիբրի» տառատեսակ, սովորական 17 կետ, 100 % սեւ:

10. Օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները՝

- **Եզրագիծ՝** 3 կետ, գույն՝ 100 % կապտականաչ ` կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 25 կետ, 100 % սեւ:
«Կալիբրի» տառատեսակ, սովորական 17 կետ, 100 % սեւ:


11. Սառեցրած սննդամթերքի պահպանման բոլոր այն խցիկների պահպանման ծավալները, որոնք ունեն աստղային դասակարգում՝

- **Եզրագիծ՝** 3 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 25 կետ, 100 % սեւ:
«Կալիբրի» տառատեսակ, սովորական 17 կետ, 100 % սեւ:

12. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:**13. Մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը:****14. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 90 x 15 մմ տարածության մեջ:**

15. Կանոնակարգի համարը՝**Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 11 կետ:

- 2) Էներգաարդյունավետության D-ից G դասերի համաձայն դասակարգված կենցաղային սառեցնող սարքերի (բացառությամբ գինու պահպանման համար նախատեսված սարքերի) պիտակի ձեռք պետք է համապատասխանի հետեւյալին՝




որտեղ՝

պիտակի ձեռք պետք է համապատասխանի սույն հավելվածի 3 (1) կետով սահմանվածին՝ բացառությամբ 8-րդ կետի, որի դեպքում կիրառվում է հետեյալը՝

8. Տարեկան էներգասպառումը՝

- **Եզրագիծ՝** 3 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 32 կետ, 100 % սեւ:
- **Երկրորդ տող՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ, 100 % սեւ:

3) Գինիների պահպանման սարքերի դեպքում պիտակի ձեռք պետք է համապատասխանի հետեյալին՝



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 110 մմ լայնություն եւ 220 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրված է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը պետք է , այնուամենայնիվ, համապատասխանի վերը նշված մասնագրերին.

բ) պիտակի ֆոնը պետք է լինի սպիտակ.

գ) գույները՝ ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ՝ ինչպես հետեւյալ օրինակում՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.

դ) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին)՝

1. **ԵՄ պիտակի սահմանագծերը՝** 5 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

2. **ԵՄ լոգոն (պատկերանիշը)՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. **Էներգապիտակ՝** գույն՝ X-00-00-00:

Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է.
ԵՄ լոգո + էներգապիտակ, լայնություն՝ 92 մմ,
բարձրություն՝ 17 մմ:

4. **Լոգոյի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, երկարություն՝ 92,5 մմ:

5. **A-ից G սանդղակը՝**

— **Սլաք՝** բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 0,75 մմ, գույներ՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասը (դասերը)՝ 00-X-X-00:

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 19 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 13 կետ, մեծատառ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դասը՝

- **Սլաք՝** լայնություն՝ 26 մմ, բարձրություն՝ 14 մմ, 100 % սեւ:
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 29 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Էներգիա՝

- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, մեծատառ, սեւ:

8. Տարեկան էներգասպառումը՝

- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 30 կետ, 100 % սեւ:
- **Երկրորդ տող՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 14 կետ, 100 % սեւ:

9. Նոմինալ տարողունակությունը՝ ստանդարտ գինու շշերի թվով՝

— **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

— **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 28 կետ, 100 % սեւ:

«Կալիբրի» տառատեսակ, սովորական 15 կետ, 100 % սեւ:

10. Օղով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները՝

— Եզրագիծ՝ 2 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ:

— **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 25 կետ, 100 % սեւ:

«Կալիբրի» տառատեսակ, սովորական 17 կետ, 100 % սեւ:

11. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը:

12. Մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը:

13. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 90 x 15 մմ տարածության մեջ:

14. 10 Կանոնակարգի համարը՝

Տեքստ՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 11 կետ:

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Արտադրանքի տեղեկաթերթիկը**

1. Արտադրանքի տեղեկաթերթիկում զետեղված տեղեկությունները պետք է ներկայացվեն հետևյալ հաջորդականությամբ եւ պետք է ներառվեն արտադրանքի մասին բրոշյուրում կամ արտադրանքի հետ տրամադրվող այլ գրականության մեջ՝
 - ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - բ) մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը, ինչպես սահմանված է I հավելվածի (ի) կետում.
 - գ) կենցաղային սառեցնող սարքի մոդելի կատեգորիան՝ VIII հավելվածի 1-ին կետի համաձայն.
 - դ) մոդելի էներգաարդյունավետության դասը՝ IX հավելվածի համաձայն.
 - ե) եթե թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՀ) համաձայն մոդելին տրվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող են ընդգրկվել այս տեղեկությունները.
 - զ) տարեկան էներգասպառումը (A_{E,c}) կՎտժ/տարի-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի 3(2) կետի համաձայն. Այն պետք է նկարագրվի որպես. «էներգասպառում «XYZ» կՎտժ/տարի՝ 24 ժամ տեւողությամբ ստանդարտ փորձարկման արդյունքների հիման վրա: Փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում եւ որտեղ է այն տեղակայված».
 - է) յուրաքանչյուր խցիկի պահպանման ծավալը եւ, առկայության դեպքում, կիրառելի աստղային դասակարգումը՝ II հավելվածի 1(1)VI կետին համապատասխան.

- ը) 1-ին հավելվածի «Ժ» կետի իմաստով այլ խցիկների նախագծային ջերմաստիճանը: Գինու պահպանման խցիկների դեպքում պետք է ներկայացվի պահպանման այն ամենացածր ջերմաստիճանը, որը նախապես կարգաբերված է խցիկում կամ կարող է կարգաբերվել վերջնական սպառողի կողմից եւ շարունակաբար պահպանվել արտադրողի ցուցումների համաձայն.
- թ) համապատասխան խցիկի (խցիկների) համար «չսառեցնող համակարգ» նշումը, ինչպես սահմանված է I հավելվածի «բ» կետում.
- ժ) հոսանքի անջատման անվտանգություն «X» Ժ՝ սահմանված որպես ջերմաստիճանի բարձրացման ժամանակ.
- ժա) սառեցման հզորությունը՝ կիլոգրամ/24 ժամ.
- ժբ) կլիմայական դասը՝ VIII հավելվածի 3-րդ աղյուսակի 1-ին կետի համաձայն՝ արտահայտված որպես կլիմայական դաս՝ Վտ[կլիմայական դաս]. Այս սարքը նախատեսված է «X» [նվազագույն ջերմաստիճան] °C եւ «X» [առավելագույն ջերմաստիճան] °C օդի ջերմաստիճանի պայմաններում օգտագործման համար.
- ժգ) օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված դԲԱ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- ժդ) եթե մոդելը նախատեսված է որպես ներկառուցվող սարք, ապա նշում է կատարվում այդ մասին.
- ժե) գինու պահպանման սարքերի դեպքում հետեւյալ տեղեկությունները՝ «Այս սարքը նախատեսված է բացառապես գինիների պահպանման համար»: Սույն կետը չի կիրառվում կենցաղային սառեցնող այն սարքերի նկատմամբ, որոնք հատուկ նախատեսված չեն գինիների պահպանման համար, սակայն կարող են օգտագործվել այդ նպատակով, ոչ էլ այն կենցաղային սառեցնող սարքերի նկատմամբ,

որոնք ունեն գինիների պահպանման խցիկ՝ որեւէ այլ տեսակի խցիկի համակցությամբ:

2. Մեկ տեղեկաթերթիկում կարող են ներառվել նույն մատակարարի կողմից մատակարարվող սառեցնող սարքերի մի շարք մոդելների վերաբերյալ տեղեկություններ:
3. Տեղեկաթերթիկում զետեղված տեղեկությունները կարող են ներկայացվել պիտակի պատճենի տեսքով՝ գունավոր կամ սեւ ու սպիտակ: Այս դեպքում 1 կետում նշված տեղեկությունները, որոնք դեռեւս ներկայացված չեն պիտակի վրա, նույնպես տրամադրվում են:

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Տեխնիկական փաստաթղթերը**

1. 3(գ) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են՝
 - ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
 - բ) սառեցնող սարքի մոդելի ընդհանուր նկարագրությունը, որը բավարար է այն միանշանակ եւ դյուրին նույնականացնելու համար.
 - գ) անհրաժեշտության դեպքում՝ հղումներ կիրառվող ներդաշնակեցված ստանդարտներին.
 - դ) անհրաժեշտության դեպքում՝ օգտագործված մյուս տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը.
 - ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու նպատակով՝ լիազորված անձի նույնականացման տվյալները եւ նրա ստորագրությունը.
 - զ) VIII հավելվածի համաձայն սահմանված չափումների համար նախատեսված տեխնիկական պարամետրերը.
 - i) ընդհանուր չափսերը.
 - ii) օգտագործման համար նախատեսված պահանջվող ամբողջ տարածությունը.
 - iii) ընդհանուր համախառն ծավալը(ծավալները).
 - iv) պահպանման ծավալը (ծավալները) եւ պահպանման ընդհանուր ծավալը (ծավալները).
 - v) սառեցված սննդամթերքի պահպանման խցիկի (խցիկների) աստղային դասակարգումը.

- vi) հալեցման տեսակը.
 - vii) պահպանման ջերմաստիճանը.
 - viii) էներգասպառումը.
 - ix) ջերմաստիճանի բարձրացման ժամանակը.
 - x) սառեցման հզորությունը.
 - xi) էլեկտրաէներգիայի սպառումը.
 - xii) գինիների պահպանման խցիկում առկա խոնավությունը.
 - xiii) օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները.
- է) VIII հավելվածին համապատասխան կատարված հաշվարկների արդյունքները:
2. Եթե կենցաղային սառեցնող սարքի կոնկրետ մոդելի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկություններն ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ կենցաղային սառեցնող սարքի այլ համարժեք մոդելներից արտամիջարկման միջոցով կամ այդ երկու միջոցով էլ, ապա տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների կամ արտամիջարկումների կամ այդ երկուսի մանրամասները, ինչպես նաև կատարված հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար մատակարարների կողմից կատարված ստուգումների մանրամասները: Տեղեկությունները պետք է ներառեն նաև կենցաղային սառեցնող սարքի համարժեք բոլոր մյուս այն մոդելների ցանկը, որոնց առնչվող տեղեկությունները ձեռք են բերվել նույն եղանակով:
-

ՀԱՎԵԼՎԱԾ V

**Տրամադրվելիք տեղեկություններն այն դեպքերում,
երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողները կարող են
տեսնել ցուցադրված արտադրանքը**

1. 4(բ) հոդվածում նշված տեղեկությունները տրամադրվում են հետևյալ կարգով՝
 - ա) մոդելի էներգաարդյունավետության դասը, ինչպես սահմանված է IX հավելվածում.
 - բ) տարեկան էներգասպառումը՝ կՎտժ/տարի-ով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VIII հավելվածի 3(2) կետի համաձայն.
 - գ) յուրաքանչյուր խցիկի պահպանման ծավալը եւ, առկայության դեպքում, կիրառելի աստղային դասակարգումը՝ II հավելվածի 1(1)VI կետին համապատասխան.
 - դ) կլիմայական դասը՝ VIII հավելվածի 3-րդ աղյուսակի 1-ին կետին համապատասխան.
 - ե) օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված դԲԱ-ով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը.
 - զ) եթե մոդելը նախատեսված է ներկառուցման համար, ապա նշում է կատարվում այդ մասին.
 - է) գինու պահպանման սարքերի համար հետևյալ տեղեկությունները՝ «Այս սարքը նախատեսված է բացառապես գինիների պահպանման համար»: Սույն կետը չի կիրառվում կենցաղային սառեցնող այն սարքերի նկատմամբ, որոնք հատուկ նախատեսված չեն գինիների

պահպանման համար, սակայն կարող են օգտագործվել այդ նպատակով, ոչ էլ այն կենցաղային սառեցնող սարքերի նկատմամբ, որոնք ունեն գինիների պահպանման խցիկ՝ որեւէ այլ տեսակի խցիկի համակցությամբ:

2. Արտադրանքի տեղեկաթերթիկում ներառված այլ տեղեկությունների տրամադրման դեպքում դրանք պետք է ներկայացվեն III հավելվածում նշված ձևով եւ կարգով:
 3. Սույն հավելվածում նշված տեղեկությունները տպագրվում կամ ներկայացվում են ընթեռնելի տառաչափով եւ տառատեսակով:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ VI***Չափումները**

1. Սույն կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապահովման եւ այդ համապատասխանության ստուգման նպատակներով պետք է կատարվեն չափումներ՝ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման այնպիսի ընթացակարգերի կիրառմամբ, որոնցում հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները, այդ թվում՝ այն փաստաթղթերով սահմանված մեթոդները, որոնց համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*:

2. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փորձարկման համար կիրառվում են հետեւյալ ընդհանուր պայմանները՝

- 1) վերջնական սպառողի կողմից միացվելու եւ անջատվելու հնարավորությամբ հակակոնդենսացման տաքացուցիչների դեպքում դրանք պետք է միացված լինեն, եւ եթե կարգավորելի է, ապա կարգաբերվեն առավելագույն ջերմաստիճանով.
- 2) վերջնական սպառողի կողմից միացվելու եւ անջատվելու հնարավորությամբ «դռան մեջ հարմարեցված սարքերի» (ինչպես օրինակ՝ սառույցի կամ պաղեցրած ջրի/ըմպելիքների դիսպենսերներ) էներգասպառման չափումների ընթացքում դրանք պետք է միացված լինեն, սակայն չչահագործվեն.
- 3) համապիտանի սարքերի եւ խցիկների էներգասպառման չափումների ընթացքում պահպանման ջերմաստիճանը պետք է լինի ամենացածր ջերմաստիճանով խցիկի նոմինալ ջերմաստիճանը, որն արտադրողի

հրահանգների համաձայն սահմանված է շարունակական բնականոն օգտագործման համար.

- 4) կենցաղային սառեցնող սարքերի էներգասպառումը պետք է որոշվի ամենացածր ջերմաստիճանի կոնֆիգուրացիայով՝ արտադրողի ցանկացած «այլ խցիկի» շարունակական բնականոն օգտագործմանը վերաբերող հրահանգների համաձայն՝ ինչպես սահմանված է VIII հավելվածի 5-րդ աղյուսակով:

3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

Պետք է սահմանվեն հետևյալ պարամետրերը՝

- ա) ընդհանուր չափսերը, որոնք չափվում են միլիմետրի ամենամոտ արժեքի ճշտությամբ.
- բ) օգտագործման համար նախատեսված պահանջվող ամբողջ տարածությունը, որը չափվում է միլիմետրի ամենամոտ արժեքի ճշտությամբ.
- գ) ընդհանուր համախառն ծավալը (ծավալները), որը չափվում է խորանարդ դեցիմետրի կամ լիտրի ամենամոտ ամբողջ արժեքի ճշտությամբ.
- դ) պահպանման ծավալը (ծավալները) եւ պահպանման ընդհանուր ծավալը (ծավալները), որը չափվում է խորանարդ դեցիմետրի կամ լիտրի ամենամոտ ամբողջ արժեքի ճշտությամբ.
- ե) հալեցման տեսակը.
- զ) պահպանման ջերմաստիճանը.
- է) էներգասպառումը, որն արտահայտվում է 24 ժամվա ընթացքում հաշվարկված կիլովատտ/ժամ-ով (կիլովատտ ժամ /24 ժամում)՝ երեք տասնորդական նիշի ճշտությամբ.

- ը) ջերմաստիճանի բարձրացման ժամանակը.
 - թ) սառեցման հզորությունը.
 - ժ) գինիների պահպանման խցիկում առկա խոնավությունը, որը կլորացվում է մինչեւ տոկոսի ամենամոտ ամբողջ արժեքը.
 - ժա) օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ VII***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող
ստուգման ընթացակարգը**

3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակներով անդամ պետությունների լիազորված մարմինները փորձարկում են մեկ միավոր կենցաղային սառեցնող սարք: Եթե չափված պարամետրերը չեն համապատասխանում մատակարարի կողմից նշված արժեքներին՝ 1-ին աղյուսակով սահմանված միջակայքում, ապա չափումներ են իրականացվում եւս երեք կենցաղային սառեցնող սարքերի համար: Այդ երեք կենցաղային սառեցնող սարքերի համար չափված արժեքների միջին թվաբանականը պետք է համապատասխանի 1-ին աղյուսակով սահմանված միջակայքի պահանջներին:

Այլապես, տվյալ մոդելը եւ համարժեք կենցաղային սառեցնող սարքերի մյուս բոլոր մոդելները համարվում են պահանջներին չհամապատասխանող:

Ի հավելումն VI հավելվածով սահմանված ընթացակարգի, անդամ պետությունների լիազորված մարմինները պետք է կիրառեն հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման այնպիսի ընթացակարգեր, որոնցում հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները, այդ թվում՝ այն փաստաթղթերում ներկայացված մեթոդները, որոնց համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*:

Աղյուսակ 1

Չափված պարամետրը	Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները
Նոմինալ համախառն ծավալը	Չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից (*) փոքր լինի ավելի, քան 3 %-ով կամ 1 լ-ով, կախված նրանից, թե որն է արժեքներից ավելի մեծ:
Պահպանման նոմինալ ծավալը	Չափված արժեքը չպետք է լինի նոմինալ արժեքից փոքր լինի ավելի, քան 3 %-ով կամ 1 լիտրով, կախված նրանից, թե որն է արժեքներից ավելի մեծ: Եթե նկուղային խցիկի եւ թարմ սննդամթերքի պահպանման խցիկի ծավալները օգտագործողի կողմից ենթակա են կարգավորման՝ մեկը մյուսի նկատմամբ, ապա այդ չափման շեղումը կիրառվում է այն դեպքում, երբ նկուղային խցիկը կարգավորվում է իր նվազագույն ծավալով:
Սառեցման հզորությունը	Չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից փոքր լինի ավելի, քան 10 %-ով:
Էներգասպառումը	Չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից (E24h) մեծ լինի ավելի, քան 10 %-ով:
Գինիների պահպանման սարքը	Հարաբերական խոնավության չափված արժեքը չպետք է նոմինալ միջակայքից մեծ լինի ավելի, քանի 10 %-ով:
Օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները	Չափված արժեքը պետք է համապատասխանի նոմինալ արժեքին:

(*) «նոմինալ արժեք» նշանակում է արտադրողի կողմից նշված արժեք:

*ՀԱՎԵԼՎԱԾ VIII***Կենցաղային սառեցնող սարքերի դասակարգումը, համարժեք ծավալի եւ
էներգաարդյունվետության ինդեքսի հաշվարկման մեթոդը****1. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՌԵՑՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

Կենցաղային սառեցնող սարքերը դասակարգվում են ըստ 1-ին աղյուսակում բերված կատեգորիաների:

Յուրաքանչյուր կատեգորիա սահմանվում է ըստ 2-րդ աղյուսակում բերված խցիկի հատուկ կառուցվածքի եւ կախված չէ դռների եւ/կամ դարակների քանակից:

*Աղյուսակ 1***Կենցաղային սառեցնող սարքերի կատեգորիաները**

Կատեգորիա	Ծածկագրային նշագիրը
1	Թարմ սննդամթերքի մեկ կամ մի քանի պահպանման խցիկներով սառնարան
2	Սառնարան-նկուղ սարք, նկուղային եւ գինիների պահպանման սարքեր
3	Սառնարան՝ պաղեցման սարք եւ սառնարան՝ Օ-աստղանի պահպանման խցիկով
4	Սառնարան՝ մեկաստղանի պահպանման խցիկով
5	Սառնարան՝ երկաստղանի պահպանման խցիկով
6	Սառնարան՝ եռաստղանի պահպանման խցիկով
7	Սառնարան-սառցարան
8	Ուղղաձիգ կանգնող սառցարան
9	Վերելից բացվող սառցարան
10	Համապիտանի եւ այլ սառեցնող սարքեր

Կենցաղային սառեցնող սարքերը չեն կարող դասակարգվել 1-9-րդ կատեգորիաների ներքո, քանի որ խցիկի ջերմաստիճանը դասակարգվում է 10-րդ կատեգորիայի ներքո:

Աղյուսակ 2

Կենցաղային սառեցնող սարքերի դասակարգումը եւ համապատասխան խցիկի կառուցվածքը

Նոմինալ ջերմաստիճան (էԱԻ համար) (°C)	Նախագծային T	+ 12	+ 12	+ 5	0	0	- 6	- 12	- 18	- 18	Կատեգորիա (թիվը)
Խցիկի տեսակը	Այլ	Իինինների պահում	Նկուղ սարք	Թարմ սննդամթերքի պահպանում	Պաղեցում	0-աստղանի /սառույցի պատրաստում	մեկաստղանի պահպանում	երկաստղանի պահպանում	եռաստղանի պահպանում	քառաստղանի պահպանում	
Սարքի կատեգորիան	Խցիկների կառուցվածքը										
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ԹԱՐՄ ԽՑԻԿՆԵՐՈՎ ՍԱՌՆԱՐԱՆ	N	N	N	Y	N	N	N	N	N	N	1
ՍԱՌՆԱՐԱՆ-ՆԿՈՒՂ ՍԱՐՔ, ՆԿՈՒՂ ՍԱՐՔ ԵՎ ԳԻՆԻՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԱՐՔ	O	O	O	Y	N	N	N	N	N	N	2
	O	O	Y	N	N	N	N	N	N	N	
	N	Y	N	N	N	N	N	N	N	N	
ՍԱՌՆԱՐԱՆ-ՊԱՂԵՑՆՈՂ ՍԱՐՔ ԵՎ ՍԱՌՆԱՐԱՆ 0-ԱՍՏՂԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՑԻԿՈՎ	O	O	O	Y	Y	O	N	N	N	N	3
	O	O	O	Y	O	Y	N	N	N	N	
ՄԵԿԱՍՏՂԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՑԻԿՈՎ ՍԱՌՆԱՐԱՆ	O	O	O	Y	O	O	Y	N	N	N	4
ԵՐԿԱՍՏՂԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՑԻԿՈՎ ՍԱՌՆԱՐԱՆ	O	O	O	N	O	O	O	Y	N	N	5

ԵՌԱՍՏՂԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՑԻԿՈՎ ՍԱՌՆԱՐԱՆ	O	O	O	Y	O	O	O	O	Y	N	6
ՍԱՌՆԱՐԱՆ-ՍԱՌՑԱՐԱՆ	O	O	O	Y	O	O	O	O	O	Y	7
ՈՒՂՂԱՁԻԳ ԿԱՆԳՆՈՂ ՍԱՌՑԱՐԱՆ	N	N	N	N	N	N	N	O	(Y C)	Y	8
ՎԵՐԵՎԻՑ ԲԱՑՎՈՂ ՍԱՌՑԱՐԱՆ	N	N	N	N	N	N	N	O	N	Y	9
ՀԱՄԱՊԻՏԱՆԻ ԵՎ ԱՅԼ ՍԱՐՔԵՐ	O	O	O	O	O	O	O	O	O	O	10

Ծանոթագրություններ՝

Y՝ առկա է խցիկ, N՝ առկա չէ խցիկ, O՝ խցիկի առկայությունն ըստ ցանկության.

(a) նաեւ ընդգրկում է սառեցված սննդամթերքի եռաստղանի պահպանման համար նախատեսված պահարաններ:

Կենցաղային սառեցնող սարքերը դասակարգվում են մեկ կամ մի քանի կլիմայական դասերի ներքո, ինչպես ներկայացված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Կլիմայական դասերը

Դաս	Պայմանանշան	Օդի միջին ջերմաստիճան °C
Ընդլայնված ջերմաստիճանի միջակայք	SN	+ 10-ից + 32
Ջերմաստիճան	N	+ 16-ից + 32
Սուբտրոպիկական	ST	+ 16-ից + 38
Տրոպիկական	T	+ 16-ից + 43

Սառեցնող սարքերը պետք է պահպանման պահանջվող ջերմաստիճանները տարբեր խցիկներում միաժամանակ եւ ջերմաստիճանի թույլատրելի շեղումների սահմաններում պահպանելու հնարավորություն ունենան (հալեցման ցիկլի ընթացքում), ինչպես սահմանված է 4-րդ աղյուսակում տարբեր տեսակի կենցաղային սառեցնող սարքերի եւ համապատասխան կլիմայական դասերի համար:

Համապիտանի սարքերը եւ խցիկները պետք է տարբեր տեսակի խցիկների համար նախատեսված պահպանման պահանջվող ջերմաստիճանները պահպանելու հնարավորություն ունենան, եթե այդ ջերմաստիճանները կարող են կարգաբերվել վերջնական սպառողի կողմից՝ արտադրողի հրահանգների համաձայն:

Աղյուսակ 4

Պահպանման ջերմաստիճանները

Պահպանման ջերմաստիճանները (°C)							
Այլ խցիկ	Գինիների պահպանման խցիկ	Նկուղային խցիկ	Թարմ սննդամթերքի պահպանման խցիկ	Պաղ խցիկ	մեկաստղանի պահպանման խցիկ	2 աստղ պահպանման խցիկ/բաժին	Մննդամթերքի սառցարան եւ եռաստղանի պահպանման խցիկ/պահարան
t_{om}	t_{wma}	t_{cm}	$t_{1m}, t_{2m}, t_{3m}, t_{ma}$	t_{cc}	t^*	t^{**}	t^{***}
$> +14$	$+5 \leq t_{wma} \leq +20$	$+8 \leq t_{cm} < +14$	$0 \leq t_{1m}, t_{2m}, t_{3m} \leq +8;$ $t_{ma} \leq +4$	$-2 \leq t_{cc} \leq +3$	≤ -6	≤ -12 ^(a)	≤ -18 ^(a)

Ծանոթագրություններ՝

- t_{om} ՝ այլ խցիկների պահպանման ջերմաստիճանը.
- t_{wma} ՝ 0,5 Կ-ի շեղմամբ գինիների պահպանման խցիկի պահպանման ջերմաստիճանը.
- t_{cm} ՝ նկուղային խցիկի պահպանման ջերմաստիճանը.
- t_{1m}, t_{2m}, t_{3m} ՝ թարմ սննդամթերքի համար նախատեսված խցիկի պահպանման ջերմաստիճանը.
- t_{ma} ՝ թարմ սննդամթերքի համար նախատեսված խցիկի պահպանման միջին ջերմաստիճանը.
- t_{cc} ՝ պաղեցման խցիկի պահպանման ակնթարթային ջերմաստիճանը.
- t^*, t^{**}, t^{***} ՝ սառեցված սննդամթերքի պահպանման խցիկների առավելագույն ջերմաստիճանը.
- սառույցի պատրաստման խցիկի եւ 0-աստղանի պահպանման խցիկի պահպանման ջերմաստիճանը 0 °C-ից ցածր է:
- (^a) Առանց սառույցի կենցաղային սառեցնող սարքերի համար հալեցման ցիկի դեպքում չորս ժամվա ընթացքում թույլատրվում է 3 Կ-ից ոչ ավելի ջերմաստիճանային շեղում կամ գործող ցիկի ընթացքի 20 %-ը՝ կախված նրանից, թե որ արժեքն է ավելի փոքր:

2. ՀԱՄԱՐԺԵՔ ԾԱՎԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Կենցաղային սառեցնող սարքերի համարժեք ծավալը բոլոր խցիկների համարժեք ծավալների գումարն է: Այն հաշվարկվում է լիտրով եւ կլորացվում է մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը հետեւյալ կերպ՝

$$V_{eq} = \left[\sum_{c=1}^{c=n} V_c \times \frac{(25 - T_c)}{20} \times FF_c \right] \times CC \times BI$$

որտեղ՝

- n -ը՝ խցիկների թիվն է,
- V_c -ն՝ խցիկի (խցիկների) պահպանման ծավալն է,
- T_c -ն՝ խցիկի (խցիկների) նոմինալ ջերմաստիճանն է, ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակով,
- $\frac{(25-T_c)}{20}$ ((25- T_c))/20-ը թերմոդինամիկ գործոնն է, ինչպես սահմանված է 5-րդ աղյուսակով,
- FF_c , CC եւ BI ծավալի ուղղիչ գործակիցներ են, ինչպես սահմանված է 6-րդ աղյուսակով:

Թերմոդինամիկ ուղղիչ գործակիցը $\frac{(25-T_c)}{20}$ խցիկի նոմինալ ջերմաստիճանի T_c (սահմանված է 2-րդ աղյուսակով) եւ $+ 25$ °C ջերմաստիճանում ստանդարտ փորձարկման պայմաններում օդի ջերմաստիճանի միջեւ ջերմաստիճանի տարբերությունն է, որն արտահայտվում է $+ 5$ °C ջերմաստիճանում թարմ սննդամթերքի խցիկի համար նույն տարբերության հարաբերությամբ:

I հավելվածի (է)-ից (Ժ) կետերում նկարագրված խցիկների համար թերմոդինամիկ գործակիցները սահմանված են 5-րդ աղյուսակով:

Աղյուսակ 5

Սառեցնող սարքերի խցիկների թերմոդինամիկ գործակիցները

Խցիկ	Նոմինալ ջերմաստիճան	$(25-T_c)/20$
Այլ խցիկ	Նախագծային ջերմաստիճան	$\frac{(25 - T_c)}{20}$
Նկուղային խցիկ/գինիների պահպանման խցիկ	+ 12 °C	0,65
Թարմ սննդամթերքի պահպանման խցիկ	+ 5 °C	1,00
Պաղեցման խցիկ	0 °C	1,25
Սառույց պատրաստելու խցիկ եւ 0-աստղանի խցիկ	0 °C	1,25
մեկաստղանի պահպանման խցիկ	-6 °C	1,55
երկաստղանի պահպանման խցիկ	- 12 °C	1,85
եռաստղանի պահպանման խցիկ	- 18 °C	2,15
Սննդամթերքի սառեցման խցիկ (քառաստղանի պահպանման խցիկ)	- 18 °C	2,15

Ծանոթագրություններ՝

- i) համապիտանի խցիկների համար թերմոդինամիկ գործակիցները որոշվում են ըստ նոմինալ ջերմաստիճանի՝, ինչպես ներկայացված է 2-րդ աղյուսակում ամենացածր ջերմաստիճանով խցիկի այն տեսակի համար, որը կարող է կարգաբերվել վերջնական սպառողի կողմից եւ շարունակաբար պահպանվել արտադրողի հրահանգներին համաձայն.
- ii) երկաստղանի պահպանման ցանկացած բաժնի դեպքում (սառցարանի ներսում), թերմոդինամիկ գործակիցը սահմանվում է՝ $T_c = - 12$ °C-ով.
- iii) այլ խցիկների համար թերմոդինամիկ գործակիցը սահմանվում է ըստ նախագծային ամենացածր ջերմաստիճանի, որը կարող է կարգաբերվել վերջնական սպառողի կողմից եւ շարունակաբար պահպանվել արտադրողի հրահանգների համաձայն:

Աղյուսակ 6

Ուղղիչ գործակիցների արժեքը

Ուղղիչ գործակից	Արժեք	Պայմաններ
FF (առանց սառույցի)	1,2	Առանց սառույց առաջացնելու սառեցված սննդամթերքի պահպանման խցիկներ
	1	Հակառակ դեպքում
CC (կլիմայական դաս)	1,2	T (տրոպիկական) դասի սարքեր
	1,1	ST (սուբտրոպիկական) դասի սարքեր
	1	Հակառակ դեպքում
BI (ներկառուցված)	1,2	Մինչև 58 սմ լայնությամբ ներկառուցված սարքերի համար
	1	Հակառակ դեպքում

Ծանոթագրություններ՝

- i) FF-ն՝ առանց սառույցի առաջացման խցիկների ծավալի ուղղիչ գործակիցն է.
- ii) CC-ն՝ տվյալ կլիմայական դասի ուղղիչ գործակիցն է. եթե սառեցնող սարքերը դասակարգվում են մեկից ավելի կլիմայական դասերի ներքո, ապա ամենաբարձր ուղղիչ գործակցով կլիմայական դասը կիրառվում է համարժեք ծավալը հաշվարկելու համար:
- iii) BI-ն՝ ներկառուցված սարքերի ծավալի ուղղիչ գործակիցն է:

3. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Կենցաղային սառեցնող սարքերի մոդելի էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) հաշվարկելու համար կենցաղային սառեցնող սարքերի տարեկան էներգասպառումը համեմատվում է դրա ստանդարտ տարեկան էներգասպառման հետ:

- 1) Էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) հաշվարկվում է հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչև մեկ տասնորդական նիշ՝

$$EI \frac{AE_c}{SAE_c} \times 100$$

որտեղ՝

AE_C -ն կենցաղային սառեցնող սարքերի տարեկան էներգասպառումն է.

SAE_C -ն կենցաղային սառեցնող սարքերի ստանդարտ տարեկան էներգասպառումն է.

2) Տարեկան էներգասպառումը (AE_C)-ը հաշվարկվում է կՎտժ/տարի-ով հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ՝

$$AE_C = E_{24h} \times 365$$

որտեղ՝

E_{24h} -ն կենցաղային սառեցնող սարքերի էներգասպառումն է՝ արտահայտված կՎտժ/24 ժամ-ով:

3) Տարեկան ստանդարտ էներգասպառումը (SAE_C) հաշվարկվում է կՎտժ/տարի-ով հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ՝

$$SAE_C = V_{eq} \times M + N + CH$$

որտեղ՝

V_{eq} -ն կենցաղային սառեցնող սարքերի համարժեք ծավալն է.

CH -ն հավասար է 50 կՎտժ/տարի առնվազն 15 լիտր պահպանման ծավալով պաղեցման խցիկով կենցաղային սառեցնող սարքերի համար.

M եւ N արժեքները կենցաղային սառեցնող սարքի յուրաքանչյուր կատեգորիայի համար ներկայացված են 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7

**M եւ N արժեքներն ըստ կենցաղային սառեցնող
սարքերի կատեգորիայի**

Կատեգորիա	M	N
1	0,233	245
2	0,233	245
3	0,233	245
4	0,643	191
5	0,450	245
6	0,777	303
7	0,777	303
8	0,539	315
9	0,472	286
10	(*)	(*)

* Ծանոթագրություն. 10-րդ կատեգորիայի կենցաղային սառեցնող սարքերի դեպքում M եւ N արժեքները կախված են ջերմաստիճանից եւ պահպանման ամենացածր ջերմաստիճանով խցիկի աստղային պահպանումից, որը կարող է կարգաբերվել վերջնական սպառողի կողմից եւ շարունակաբար պահպանվել արտադրողի հրահանգների համաձայն: Եթե առկա է միայն «այլ խցիկ», ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակով եւ I հավելվածի «Ժդ» կետով, կիրառվում են 1-ին կատեգորիայի համար սահմանված M եւ N արժեքները: Եռաստղանի պահպանման խցիկներով կամ սննդամթերքի սառեցման խցիկներով սարքերը համարվում են սառնարան-սառցարաններ:

ՀԱՎԵԼՎԱԾ IX

Էներգաարդյունավետության դասերը

Կենցաղային սառեցնող սարքերի էներգաարդյունավետության դասը որոշվում է դրա էներգաարդյունավետության ինդեքսին (EEI) համապատասխան, ինչպես սահմանված է 1-ին աղյուսակում՝ 2011 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2014 թվականի հունիսի 30-ը եւ 2-րդ աղյուսակում՝ 2014 թվականի հուլիսի 1-ից:

Կենցաղային սառեցնող սարքերի էներգաարդյունավետության ինդեքսը որոշվում է VIII հավելվածի 3-րդ կետի համաձայն:

Աղյուսակ 1

**Էներգաարդյունավետության դասերը մինչև
2014 թվականի հունիսի 30-ը**

Էներգաարդյունավետության դասը	Էներգաարդյունավետության ինդեքսը
A+++ (ամենաարդյունավետ)	$EEI < 22$
A++	$22 \leq EEI < 33$
A+	$33 \leq EEI < 44$
A	$44 \leq EEI < 55$
B	$55 \leq EEI < 75$
C	$75 \leq EEI < 95$
D	$95 \leq EEI < 110$
E	$110 \leq EEI < 125$
F	$125 \leq EEI < 150$
G (ամենաքիչ արդյունավետ)	$EEI \geq 150$

*Աղյուսակ 2***Էներգաարդյունավետության դասերը****2014 թվականի հուլիսի 1-ից**

Էներգաարդյունավետության դասը	Էներգաարդյունավետության ինդեքսը
A+++ (ամենաարդյունավետ)	$EEl < 22$
A++	$22 \leq EEl < 33$
A+	$33 \leq EEl < 42$
A	$42 \leq EEl < 55$
B	$55 \leq EEl < 75$
C	$75 \leq EEl < 95$
D	$95 \leq EEl < 110$
E	$110 \leq EEl < 125$
F	$125 \leq EEl < 150$
G (ամենաքիչ արդյունավետ)	$EEl \geq 150$